

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Սերբիայի Հանրապետության Կառավարությունը,  
ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիա,  
համաձայնեցին հետևյալի մասին.

## **Հոդված 1 ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

## **Հոդված 2 ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ**

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից եկամտից և գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտի և գույքի վրա սահմանված հարկեր են համարվում եկամտի ընդհանուր գումարի, գույքի ընդհանուր արժեքի, կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի վրա սահմանված բոլոր տեսակի հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարման արդյունքում արժեքի հավելածի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ աշխատանքի դիմաց վարձատրության ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքաճի վրա սահմանված հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է հետևյալ գոյություն ունեցող հարկերի նկատմամբ, մասնավորապես.

Հայաստանում.

- 1) շահութահարկ,
- 2) եկամտահարկ,
- 3) գույքահարկ,

Սերբիայում.

- 1) կորպորատիվ շահութահարկ,
- 2) ֆիզիկական անձանցից եկամտահարկ,
- 3) գույքահարկ:

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն:

### Հոդված 3

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

1) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում.

2) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետությունը, և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է տարածք՝ ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավազորությունը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի,

3) «Սերբիա» տերմինը նշանակում է Սերբիայի Հանրապետությունը, և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, այն նշանակում է Սերբիայի Հանրապետության տարածքը,

4) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

- Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

- Պայմանավորվող պետության գործող օրենքների հիման վրա, որպես այդպիսին, կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ:

5) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

6) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ սուբյեկտ, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

7) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

8) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով կամ ավտոճանապարհային փոխադրամիջոցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը, օդանավը կամ ավտոճանապարհային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

9) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

- Հայաստանում՝ Ֆինանսների նախարարը և Պետական եկամուտների կոմիտեի նախագահը կամ նրանց լիազոր ներկայացուցիչները,

- Սերբիայում՝ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կամ դրա լիազոր ներկայացուցիչը:

2. Ինչ վերաբերում է սույն Կոնվենցիան Պայմանավորվող պետության կողմից ցանկացած պահի կիրառելուն, ապա դրանում չսահմանված ցանկացած տերմին ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին այդ պետության իրավունքի համաձայն այն հարկերի նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան, և այդ պետությունում կիրառելի հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ պետության այլ օրենքներով այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

#### Հոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝ «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է ցանկացած անձ, որն այդ պետության օրենքների համաձայն ենթակա է հարկման այդ պետությունում իր մշտական բնակության, բնակության, գրանցման վայրի, կառավարման վայրի, փաստացի կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանման չափորոշիչի հիման վրա, և ներառում է նաև այդ պետությունը և նրա ցանկացած քաղաքական ստորաբաժանումը կամ իշխանության տեղական մարմինը: Սակայն, այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որը ենթակա է հարկման այդ պետությունում միայն այդ պետության աղբյուրներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Այն դեպքում, երբ 1-ին պարբերության դրույթների հիման վրա ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

1) նա համարվում է այն պետության ռեզիդենտ, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, իսկ եթե նա երկու պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է այն պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

2) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա պետություններից ոչ մեկում չունի իր տրամադրության տակ մշտական կացարան, ապա նա համարվում է այն պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

3) եթե նա սովորաբար երկու պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից և ոչ մեկում, ապա նա համարվում է այն պետության ռեզիդենտ, որի ազգային անձ է հանդիսանում,

4) եթե նա երկու պետությունների ազգային անձ է կամ դրանցից և ոչ մեկի ազգային անձ չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1-ին պարբերության դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

## **Հոդված 5 ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության իրականացման կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը, հատկապես, ներառում է՝

1) կառավարման վայր,

2) մասնաճյուղ,

3) գրասենյակ,

4) գործարան,

5) արհեստանոց, և

6) հանքավայր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ օգտակար հանածոների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման կամ տեղակայման ծրագիրը համարվում է մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ դրանց տևողությունը գերազանցում է 12 ամիսը:

4. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում՝

1) ենթակառուցվածքների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեսավորման, ցուցադրման կամ մեկանգամյա առաքման նպատակով,

2) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ մեկանգամյա առաքման նպատակով,

3) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը այլ ձեռնարկության կողմից բացառապես մշակման նպատակով,

4) ձեռնարկության համար գործունեության իրականացման կայուն վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

5) գործունեության իրականացման կայուն վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

6) գործունեության իրականացման կայուն վայրի պահպանումը բացառապես 1-5-րդ ենթապարբերություններում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության իրականացման կայուն վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Անկախ 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից՝ այն դեպքում, երբ անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որի նկատմամբ կիրառվում է 6-րդ պարբերությունը) տարբերվող անձը գործում է Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում՝ ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության համար, եթե այդպիսի անձը.

1) ունի ու սովորաբար օգտագործում է այդ պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, եթե միայն այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ պարբերությունում նշվածով, որը եթե անգամ և իրականացվում է գործունեության իրականացման կայուն վայրի միջոցով, այդ պարբերության դրույթների համաձայն այդ գործունեության իրականացման կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության, կամ

2) չունի այդպիսի իրավասություն, սակայն սովորաբար պահում է առաջինը հիշատակված պետությունում ապրանքների կամ արտադրանքի պաշար, որից նա պարբերաբար ապրանքներ կամ արտադրանք է մատակարարում ձեռնարկության անունից:

6. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ իր ձեռնարկատիրական գործունեությունը այդ պետությունում իրականացնում է բրոքերի, գլխավոր միջնորդ գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է դրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

## **Հոդված 6**

### **ԵԿԱՄՈՒՏԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը դրան տրված է այն Պայմանավորվող պետության իրավունքով, որտեղ գտնվում է խնդրո առարկա գույքը: Տերմինն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունների գլխաքանակն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր իրավունքի դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և



օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ ֆիքսված վճարումների իրավունքները: Նավերը, օդանավերը և ավտոճանապարհային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ պարբերությունների դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

## **Հոդված 7**

### **ՇԱՀՈՒՅԹԸ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Պահպանելով 3-րդ պարբերության դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող միանգամայն

ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է կատարել այնպիսի ծախսերի նվազեցումներ, որոնք կատարվել են մշտական հաստատության գործունեության նպատակների համար, այդ թվում՝ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ կատարվում են դրանք այն պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ վայրում: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում, այդպիսի նվազեցումները չպետք է թույլատրվեն այն գումարների մասով, եթե այդպիսիք կան, որոնք վճարվում են (բացառությամբ փաստացի կատարված ծախսերի փոխհատուցման) մշտական հաստատության կողմից ձեռնարկության հիմնական գրասենյակին կամ դրա մյուս գրասենյակներին արտոնագրերի կամ այլ իրավունքների օգտագործման դիմաց՝ ռոյալթիների, հոնորարների կամ նմանատիպ այլ վճարումների տեսքով, կամ միջնորդավճարի տեսքով՝ մատուցած հատուկ ծառայությունների կամ կառավարման դիմաց, կամ, բացառությամբ բանկերի դեպքում, մշտական հաստատությանը փոխառությամբ տրված գումարի վրա սահմանված տոկոսների տեսքով: Նմանապես, մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվում մշտական հաստատության վճարած գումարները (այլ կերպ քան, որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկության հիմնական գրասենյակին կամ դրա մյուս գրասենյակներին՝ արտոնագրերից կամ այլ իրավունքներից օգտվելու դիմաց ռոյալթիների, վճարների կամ համանման այլ վճարումների տեսքով, կամ միջնորդավճարի տեսքով՝ մատուցված հատուկ ծառայությունների կամ կառավարման դիմաց, կամ, բացառությամբ բանկերի դեպքում, ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ դրա մյուս գրասենյակներին փոխառությամբ տրված գումարի վրա սահմանված տոկոսների տեսքով:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր ենթամասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ պարբերությունում ոչինչ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը հարկման ենթակա շահույթը որոշել այդպիսի բաշխման ընդունված եղանակով. բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ներառված սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշվում է տարեցտարի միևնույն եղանակով, եթե չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

### **Հոդված 8**

#### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ավտոճանապարհային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ գործունեությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ:

### **Հոդված 9**

#### **ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Եթե

1) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

2) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և երկու դեպքերից յուրաքանչյուրում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ այդ ձեռնարկություններից մեկին, սակայն այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում, և այդ մյուս պետությունը համաձայն է, որ այդ ձևով ներառված շահույթի բոլոր տարրերը համարվեն շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը հիշատակված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս պետությունը ճշգրտումը համարում է հիմնավորված: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

## **Հոդված 10** **ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐԸ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության

ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 8 տոկոսը: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

Սույն պարբերությունը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից եկամուտը՝ համաձայն այն պետության օրենքների, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության կամ անկախ բնույթի ծառայություններ է մատուցում պետությունում գործող հիմնական բազայի միջոցով, և հոլդինգը, որի մասով վճարվում են շահաբաժիններ, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ մյուս պետությունը չի կարող հարկման ենթարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեզիդենտին, կամ երբ հոլդինգը, որի մասով վճարվում են շահաբաժինները, արդյունավետ կերպով կապված է այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ

չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## **Հոդված 11 ՏՈԿՈՍՆԵՐԸ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 8 տոկոսը: Պայմանավորվող պետության իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության կամ անկախ բնույթի ծառայություններ է մատուցում այդ պետությունում գործող հիմնական բազայի միջով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս պետությունում այնտեղ

գտնվող կայուն բազայից, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված՝ կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն, այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ կայուն բազա, որի մասով առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում, վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

## **Հոդված 12 ՌՈՅԱԼԹԻՆԵՐԸ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն, այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ պետության

օրենքներին համապատասխան, բայց եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի այդպիսի ռոյալթիների համախառն գումարի 8 տոկոսը: Պայմանավորվող պետության իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում՝ գրական, ստեղծագործական կամ գիտական աշխատանքների՝ ներառյալ կինոնկարների կամ ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, արդյունաբերական նմուշի կամ մոդելի, պլանի, համակարգչային ծրագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկատվության օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս պետությունում՝ այնտեղ գտնվող ֆիքսված բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքերում, հանգամանքներից կախված՝ կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ ռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց մասով առաջացել են ռոյալթիներ վճարելու



պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

### **Հոդված 13**

#### **ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃԸ**

1. 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի, կամ մյուս Պայմանավորվող պետությանում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի ունեցած կայուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը՝ ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի կայուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ավտոճանապարհային փոխադրամիջոցների, կամ այդպիսի նավերի, օդանավերի կամ ավտոճանապարհային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

4. Ընկերության, որի գույքը ուղղակիորեն կամ անուղղակիորեն բաղկացած է գլխավորապես Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, հիմնական կապիտալի բաժնետոմսերի օտարումից առաջացած գույքի արժեքի հավելվածը կարող է հարկվել այդ պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում չնշված գույքի օտարումից առաջացած արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարող անձը:

#### **Հոդված 14**

#### **ԱՆԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Մասնագիտական ծառայություններից կամ այլ անկախ բնույթի գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե

1) նա իր գործունեությունն իրականացնելու նպատակով մյուս Պայմանավորվող պետությունում կանոնավոր կերպով իր տրամադրության տակ չունի կայուն բազա. այդ դեպքում, այդ մյուս Պայմանավորվող պետությունում կարող է հարկվել միայն այդ կայուն բազային վերագրվող եկամտի մասը, կամ

2) հարկային տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկու ամսյա ժամանակահատվածում մյուս Պայմանավորվող պետությունում նրա գտնվելու ժամանակահատվածը չի կազմում կամ չի գերազանցում ընդհանուր առմամբ 183 օրը. այդ դեպքում մյուս պետությունում կարող է հարկվել միայն այդ Պայմանավորվող պետությունում իրականացված գործունեությունից ստացված եկամտի մասը:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, գեղարվեստական, կրթական կամ մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

## Հոդված 15

### ԿԱԽՅԱԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պահպանելով 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը և այլ համանման վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Անկախ 1-ին պարբերության դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված պետությունում, եթե

1) ստացողը հաշվետու ֆինանսական տարում գտնվում է մյուս պետությունում՝ սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկու ամսյա ժամկետում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետում կամ ժամկետներում, և

2) վարձատրությունը վճարվում է մյուս պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

3) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի մյուս պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավում, օդանավում կամ ավտոճանապարհային փոխադրամիջոցներում իրականացվող

վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ պետությունում:

### **Հոդված 16 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ**

Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

### **Հոդված 17 ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ**

1. Անկախ 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի, մյուս Պայմանավորվող պետությունում որպես կատարողական արվեստի մասնագիտական ներկայացուցիչ, ինչպիսին է՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության ոլորտի արվեստի գործիչը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իր իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործիչ կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Անկախ 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից որպես արվեստի գործիչ կամ մարզիկ իր անձնական գործունեությունից ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե այդ գործունեությունն իրականացվում է մյուս Պայմանավորվող

պետությունում երկու Պայմանավորվող պետությունների կողմից հաստատված մշակութային կամ մարզական ծրագրերի փոխանակման շրջանակներում:

### **Հոդված 18 ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ**

19-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկինում կատարված վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

### **Հոդված 19 ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

1. 1) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզիկական անձին այդ պետությանը կամ ստորաբաժանմանը, կամ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձերը, աշխատանքի դիմաց վարձատրությունները և այլ համանման վարձատրությունը կարող են հարկվել միայն այդ պետությունում:

2) Այնուամենայնիվ, այդպիսի աշխատավարձերը, աշխատանքի դիմաց վարձատրությունները և այլ համանման վարձատրությունը ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում, և տվյալ ֆիզիկական անձը այդ պետության ռեզիդենտ է, ով

- հանդիսանում է այդ պետության ազգային անձ, կամ

- չի դարձել այդ պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. 1) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին՝ այդ պետությանը կամ

ստորաբաժանմանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված որևէ կենսաթոշակ կարող է հարկվել միայն այդ պետությունում:

2) Այնուամենայնիվ, այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ պետության ռեզիդենտ ու ազգային անձ:

3. 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության, կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների մասով աշխատավարձերի, աշխատանքի դիմաց վարձատրության կամ այլ համանման վարձատրության և կենսաթոշակների նկատմամբ:

## **Հոդված 20 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**

1. Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ և որը գտնվում է առաջինը հիշատակված պետությունում բացառապես իր ուսման կամ վերապատրաստման նպատակով, չի հարկվում այդ պետությունում իր ապրելու, ուսանելու կամ վերապատրաստվելու համար ստացված վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Ինչ վերաբերում է 1-ին պարբերությունով չկարգավորվող գործունեությունից ստացված դրամաշնորհներին, կրթաթոշակներին և վարձատրություններին, ապա 1-ին պարբերությունում նշված ուսանողը կամ փորձնակը, այդպիսի ուսման կամ վերապատրաստման ընթացքում, իրավունք ունի օգտվելու այն նույն արտոնություններից, ազատումներից կամ նվազեցումներից այն հարկերի առնչությամբ, որոնցից օգտվում են այն Պայմանավորվող պետության ռեզիդենտները, որ նա այցելում է:

**Հոդված 21**  
**ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԸ**

1. Ֆիզիկական անձը, որը Պայմանավորվող պետություն է ժամանում համալսարանում, քոլեջում, դպրոցում կամ այդ պետությունում ճանաչված որևէ այլ ուսումնական հաստատությունում դասավանդելու կամ հետազոտական աշխատանք կատարելու նպատակով, և որը մինչև անմիջապես այդ ժամանումը հանդիսացել կամ հանդիսանում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում ազատվում է հարկումից այդպիսի դասավանդման կամ հետազոտական աշխատանքի համար ստացված վարձատրությունների մասով՝ իր առաջին այցելությունից հետո 2 տարին չգերազանցող ժամանակահատվածի համար՝ պայմանով, որ այդ վարձատրությունն առաջանում է այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության դրույթները չեն կիրառվում հետազոտական աշխատանքից ստացված եկամտի նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունը չի իրականացվում հասարակության շահերի համար, այլ առաջին հերթին կոնկրետ անձի կամ անձանց մասնավոր շահի համար:

**Հոդված 22**  
**ԱՅԼ ԵՎ ԱՄՈՒՏԸ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին պարբերության դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս պետությունում անկախ անհատական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը,

որոնց մասով վճարվել է եկամուտը, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված՝ կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

3. Անկախ 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չքննարկված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացող եկամտի տարրերը կարող են հարկվել նաև այդ մյուս պետությունում:

### **Հոդված 23 ԳՈՒՅՔԸ**

1. 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի կայուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով, օդանավերով կամ ավտոճանապարհային փոխադրամիջոցներով ներկայացված գույքը, ինչպես նաև այդպիսի նավերի, օդանավերի և ավտոճանապարհային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է այդ գույքը տնօրինող ձեռնարկությունը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր մյուս տարրերը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:



**Հոդված 24**  
**ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ**

1. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որը սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը հիշատակված պետությունը թույլ է տալիս՝

- այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել այդ մյուս պետությունում վճարված եկամտահարկին հավասար գումար,

- այդ ռեզիդենտի գույքահարկից հանել այդ մյուս պետությունում վճարված գույքահարկին հավասար գումար:

Այդպիսի հանումները, երկու դեպքում էլ, չեն գերազանցում մինչև հանումի տրամադրումը հաշվարկված եկամտի կամ գույքի հարկի մասը, որը, կախված հանգամանքներից, կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Եթե Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացվող եկամուտը կամ գույքը ազատված է այդ պետությունում հարկումից, ապա այդ պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդ ռեզիդենտի գույքի կամ եկամտի մնացած մասի վրա տարածվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

3. Պայմանավորվող պետությունում հաշվանցման թույլտվության նպատակներով հարկը, որը վճարվել է մյուս Պայմանավորվող պետությունում, ենթադրվում է, որ ներառում է այն հարկը, որն այլ կերպ ենթակա է վճարման այդ մյուս պետությունում, բայց այդ պետության կողմից հարկային արտոնությունների իրավական դրույթներին համապատասխան նվազեցվել կամ ազատվել է:

**Հոդված 25**  
**ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ**

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ

կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության ազգային անձինք: Անկախ 1-ին հոդվածի դրույթներից՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս պետությունում պակաս բարենպաստ չէ, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս պետության ձեռնարկության հարկումը: Սույն դրույթը չի մեկնաբանվում որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին՝ քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան պարտականությունների հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրելու, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին պարբերության, 11-րդ հոդվածի 6-րդ պարբերության կամ 12-րդ հոդվածի 6-րդ պարբերության դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթիները և այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկման ենթակա շահույթի որոշման նպատակով, ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկման ենթակա կապիտալի որոշման նպատակով, ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին ունեցած պարտքը:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, պատկանում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, առաջինը հիշատակված պետությունում չի ենթարկվում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումը

և դրա հետ կապված պարտավորությունը, որը կիրառվում կամ կարող է կիրառվել առաջինը հիշատակված պետության այլ նման ձեռնարկությունների նկատմամբ:

5. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն այն հարկերի նկատմամբ, որոնք կարգավորվում են սույն Կոնվենցիայով:

## **Հոդված 26** **ՓՈՒՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԿԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԿՐԱՆՈՒՄ**

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, անկախ այդ պետությունների ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին պարբերությանը՝ այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից հետո երեք տարվա ընթացքում:

2. Իրավասու մարմինը ձգտում է, եթե ինքն առարկությունը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության հետ փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռքբերված համաձայնություն իրականացվում է՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական իրավունքում առկա որևէ ժամանակային սահմանափակման:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացած ցանկացած դժվարություն կամ խնդիր ձգտում են լուծել փոխադարձ համաձայնությամբ: Նրանք կարող են նաև համատեղ խորհրդակցել Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Նախորդ պարբերությունների առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով՝ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ:

## **Հոդված 27** **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ**

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման կամ ներպետական օրենքների կիրառման համար տեղեկատվություն են փոխանակում Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի և նկարագրության հարկերի վերաբերյալ՝ այնքանով, որքանով հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը 1-ին և 2-րդ հոդվածներով չի սահմանափակվում:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին պարբերության դրույթի համաձայն ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ պետության ներպետական օրենքների ներքո ստացված տեղեկատվությունը, և բացահատվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին պարբերությունում նշված հարկերի գնահատման կամ գանձման, հարկադիր բռնագանձման կամ դատական հետապնդման, բողոքների քննման հետ: Այդ անձինք կամ մարմինները տեղեկատվությունը օգտագործում են միայն այդպիսի նպատակներով: Նրանք կարող են հրապարակել տեղեկատվությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներում:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

1) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործելակերպին հակասող վարչական միջոցներ.

2) տրամադրելու տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչարարության ընթացքում.

3) տրամադրելու տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք, կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հանրային կարգին):

4. Եթե սույն հոդվածի դրույթների համաձայն Պայմանավորվող պետություններից մեկը դիմում է տեղեկություն ստանալու նպատակով, մյուս Պայմանավորվող պետությունը օգտագործում է տեղեկություններ հավաքելու իր միջոցները՝ ստանալու հարցվող տեղեկությունները, նույնիսկ եթե այդ մյուս պետությունն իր սեփական հարկային նպատակներով չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասությունում պարունակվող պարտավորությունը ենթակա է 3-րդ պարբերության սահմանափակումներին, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես թույլատրող Պայմանավորվող պետությանը՝ խուսափելու տեղեկություններ տրամադրելուց բացառապես այն նպատակով, որ այն չունի այդպիսի տեղեկությունների նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ պարբերության դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես թույլատրող Պայմանավորվող պետությանը՝ խուսափելու տեղեկությունների տրամադրումից բացառապես այն պատճառով, որ տեղեկությունները տիրապետում են բանկը, այլ ֆինանսական հաստատությունը, գործակալությունում աշխատող անձը կամ թեկնածուն կամ վստահված անձը կամ այն պատճառով, որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

#### **Հոդված 28**

### **ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ**

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

## **Հոդված 29 ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում են միմյանց սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու համար իրենց ներպետական օրենքներով պահանջվող ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այս ծանուցումներից վերջինի ամսաթվից, և դրա դրույթները գործում են.

### 1) Հայաստանում.

- աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամտի նկատմամբ,
- եկամտի կամ գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող ցանկացած հարկային տարվա ընթացքում վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

### 2) Սերբիայում.

- յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում, որն սկսվում է Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամտից հարկի և տնօրինված գույքից հարկի առնչությամբ:

## **Հոդված 30 ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մնում մինչև Պայմանավորվող պետության կողմից դադարեցնելը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը դիվանագիտական ուղիներով, այն ուժի մեջ մտնելու ամսաթվից հինգ տարի հետո ցանկացած օրացուցային տարվա

ավարտից առնվազն վեց ամիս առաջ դադարեցման մասին գրավոր ծանուցում ներկայացնելով: Այդ դեպքում, Կոնվենցիան դադարում է գործել.

1) Հայաստանում.

- աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման վերաբերյալ ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամտի նկատմամբ,
- եկամտի կամ գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ դադարեցման վերաբերյալ ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող ցանկացած հարկային տարվա ընթացքում վճարման ենթակա հարկերի նկատմամբ:


2) Սերբիայում.

- յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում, որն սկսվում է այն տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամտից հարկի և տնօրինված գույքից հարկի առնչությամբ, որի ընթացքում ներկայացվել է դադարեցման վերաբերյալ ծանուցումը.

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է ք. Բրեսլան 2014 թվականի Մայիսի 16-ի երկու բնօրինակով՝ հայերենով, սերբերենով և անգլերենով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարապես նույնական են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում, գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

